ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<____>> փետրվարի 2011թ. N ------Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 22-րդ հոդվածներով, 67-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և 68-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. <<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել առանձնացման ձևով՝ ստեղծելով <<Նոր Արեշ>> պոլիկլինիկա>>, <<Սարի թաղ>> պոլիկլինիկա>> և <<Նուբարաշեն>> պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերություններ:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել <<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հոկտեմբերի 30-ի <<Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու մասին>> թիվ 1413-Ն որոշման, Երևանի քաղաքապետարանի <<Թիվ 1 կլինիկական ծննդատուն>>, <<Թիվ 2 պոլիկլինիկա>>, <<Թիվ 10 պոլիկլինիկա>> և <<Թիվ 21 պոլիկլինիկա>> առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները միավորման ձևով վերակազմավորվել են՝ ստեղծելով <<<<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը։

Օպտիմալացման ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկը ստանձնել էր միավորման արդյունքում նորաստեղծ բժշկական կենտրոնի ֆինանսավորումը՝ վերանորոգման աշխատանքների և բուժական սարքավորումներ ձեռք բերման հարցում: Սակայն, ստեղծված ընկերությունը դուրս մնաց Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորման ծրագրի շրջանակներից, և այն իրականացնելու համար ստիպված էր օգտագործել սեփական միջոցները, որոնք գոյանում էին հիմնականում վճարովի ծառայություններից և ուղղվում էին մյուս օղակների ընթացիկ ծախսերի փակմանը։

Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից ստանձնած գերակա ուղղություններից է՝ արտահիվանդանոցային բուժսպասարկման մատչելիությունը և որակյալ ծառայությունների մատուցումը։ Սակայն ընկերության կազմում գործող <<Նոր Արեշ>> պոլիկլինիկա>>, <<Նուբարաշեն>> և <<Սարի թաղ>> պոլիկլինիկաները գտնվում են <<Գրիգոր Նարեկացի>> ԲԿ>> ՓԲԸ-ից բավականին հեռավորության վրա, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում ընթացիկ աշխատանքների կազմակերպման և ֆինանսական միջոցների հավաքագրման գործընթացում: Ստորաբաժանումների ղեկավարները խնայողական վերաբերմունք չեն ցուցաբերում ծախսերի նկատմամբ, քանզի չեն կրում պատասխանատվություն վերջնական արդյունքի համար։

Ներկայումս ընթանում է Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հաստատությունների արդիականացման ծրագիր, որը ենթադրում է մասնավոր ներդրումների ներգրավումը: Ներդրողների նախապայմաններից մեկն է՝ առանձնացված իրավաբանական միավորի առկայությունը:

Ընկերության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և ներդրումային ծրագրեր իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար է <<<<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն առանձնացման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով առանձին նոր ընկերություններ.

<<<<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>>, որի կազմի մեջ կընդգրկվի Նոր Արեշ 22 հասցեում գտնվող հիվանդանոցը, <<Նոր Արեշ>> պոլիկլինիկա>>, <<Սարի թաղ>> պոլիկլինիկա>>, <<Նուբարաշեն>> պոլիկլինիկա>> առանձին փակ բաժնետիրական ընկերություններ:

Նոր ընկերությունների ստեղծումը հնարավորություն կտա առանձնացված միավորներին մասնավոր ներդրումներ ներգրավելու, ֆինանսական միջոցներն ավելի արդյունավետ և նպատակային կառավարելու, վերահսկելու, ինչը իր հերթին կնպաստի առողջության առաջնային պահպանման ծառայությունների ավելացմանը և ազգաբնակչությանը մատուցվող բուժսպասարկման որակի բարձրացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<<<ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին>> որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<<<ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Գրիգոր Նարեկացի>> բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին>> որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ